ԳԱՐՆԱՆ ԽՈՀԵՐ

Զարթնում է երկիր... Անուշ կարկաչով
Վազում են ջրեր, և առաւօտեան
Կենարար հովիկն արդէն ջերմ շնչով
Շոյում է մատաղ կանաչը դարնան։

Ահա և սարեակ. դալար ոստի վրայ
Կանգնած ճռուողում, սուլում է կայտառ.
Թափ տալով թևերն ողջունում է նա
Վառ արշալուսի ժպիտը պայծառ։

Եւ ձմեռն անցաւ։ Բայց դու, իմ ընկեր,
Տրտնջում էիր, սրտնեղած, տրտում—
Եւ վազուց չէր այդ—թէ մռայլ օրեր,
Թէ ցուրտն ու խաւար հոգիդ են ճնշում։

Ա՜խ, ո՛չ բընութեան, այլ կեանքի ցրտից
Վախեցիր, եղբայր. ձմեռ էր երէկ,
Իսկ այսօր դարուն զուարթ, ծաղկալից...
Բայց մենք, մենք արդեօք կը ծաղկինք երբէք։

ՑՈՎՀԱՆՆԷՍ ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ